ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Ներածություն..... 3

ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը..... 4

ՀՀ գետերի ջրի որակը 2018 թվականին..... 12

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք..... 21

Սիսուրյանի ջրավազանային կառավարման տարածք..... 25

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք..... 27

Սևանի ջրավազանային կառավարման տարածք..... 31

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք..... 33

Հարավային ջրավազանային կառավարման տարածք..... 35

ՀՀ ջրամբարների ջրի որակը 2018 թվականին..... 38

Արաքս գետ..... 39

Սևանա լիճ..... 41

Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմեր..... 50

Ներածություն

Ամփոփագիրը կազմված է Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի մասին տեղեկատվություն ապահովելու, գետերի համեմատաբար վտանգավոր հատվածները հայտնաբերելու և դրանց վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով: Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը: Գործող մաքրման կայաններում իրականացվում են միայն մեխանիկական մաքրում և կոմունալ-կենցաղային կեղտաջրերն առանց լիարժեք մաքրվելու թափվում են մակերևութային ջրային օբյեկտներ: Ամբողջապես չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ ջրային օբյեկտներ են տանում մեծ քանակությամբ ազոտային և ֆոսֆորային միացություններ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ» կամ «միջակ» որակի է (2-րդ կամ 3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Աշտարակ և Ապարան քաղաքներից հետո, Գետառ գետը՝ գետաբերանի հատվածում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում և Երևանյան լիճը:





Հանքարդյունաբերության գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում են Ախթալա գետը գետաբերանի հատվածում, Դեբեդ գետը՝ Այրումից վերև և սահմանի մոտ, Շնող, Աճանան (Նորաշենիկ), Կարճևան գետերը՝ գետաբերանի հատվածում, Ողջի գետը՝ Կապան քաղաքի օդանավակայանից ներքև հատվածում, որտեղ ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:



ՀՀ գետերի ջրի որակը
(դիտակետերի ընդհանուր թիվ՝ 97)



2-րդ դաս (լավ)
3-րդ դաս (միջակ)
4-րդ դաս (անբավարար)
5-րդ դաս (վատ)

ՀՀ ջրամբարների ջրի որակը
(դիտակետերի ընդհանուր թիվ՝ 6)



2-րդ դաս (լավ)
3-րդ դաս (միջակ)
4-րդ դաս (անբավարար)

ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
1	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ գյ. Հարթագյուղից վերև
2	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Սպիտակից ներքև
3	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	0.6 կմ ք. Վանաձորից վերև
4	Փամբակ	Հյուսիսային	Լոռի	4.5 կմ ք. Վանաձորից ներքև
5	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև
6	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Այրումից վերև
7	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	Սահմանի մոտ
8	Ձորագետ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև
10	Ձորագետ	Հյուսիսային	Լոռի	Գետաբերան
11	Տաշիր	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև
12	Տաշիր	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ գյ. Սարատովկայից ներքև
13	Մարցիգետ	Հյուսիսային	Լոռի	Գետաբերան
14	Ախթալա	Հյուսիսային	Լոռի	Գետաբերան
210	Գարգառ	Հյուսիսային	Լոռի	Ակունք
342	Գարգառ	Հյուսիսային	Լոռի	Գետաբերան
343	Շնող	Հյուսիսային	Լոռի	Գետաբերան
15	Աղստև	Հյուսիսային	Տավուշ	1.2 կմ ք. Դիլիջանից վերև
16	Աղստև	Հյուսիսային	Տավուշ	0.5 կմ ք. Դիլիջանից ներքև
17	Աղստև	Հյուսիսային	Տավուշ	2 կմ ք.Իջևանից վերև
18	Աղստև	Հյուսիսային	Տավուշ	Սահմանի մոտ
19	Գետիկ	Հյուսիսային	Գեղարքունիք	0.5 կմ գյ. Վահանից վերև
20	Գետիկ	Հյուսիսային	Տավուշ	Գետաբերան
25	Արաքս	Ախուրյան	Արմավիր	գյ. Սուրմալուի դիմաց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
26	Արաքս	Հրազդան	Արարատ	Հրազդան գետի թափ. կետից վերև
27	Արաքս	Արարատյան	Արարատ	Հրազդան գետի թափ. կետից ներքև
28	Արաքս	Արարատյան	Արարատ	0.5 կմ Արմաշ գյուղից ներքև
29 (AMS-1)	Արաքս	Հյուսիսային	Սյունիք	2 կմ ք. Ագարակից հարավ
30 (AMS-2)	Արաքս	Հյուսիսային	Սյունիք	2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք
31	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	0.5 կմ գյ. Ամասիայից վերև
32	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	1 կմ գյ. Ամասիայից ներքև
33	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	0.8 կմ ք. Գյումրիից վերև
34	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	5 կմ ք. Գյումրիից ներքև
35	Ախուրյան	Ախուրյան	Արմավիր	0.5 կմ գյ. Բագարանից ներքև
36	Աշոցք	Ախուրյան	Շիրակ	0.5 կմ գյ. Մուսայելյանից վերև
37	Աշոցք	Ախուրյան	Շիրակ	Գետաբերան
38	Կարկաչուն	Ախուրյան	Շիրակ	Գետաբերան
40	Մեծամոր	Ախուրյան	Արմավիր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ
41	Մեծամոր	Ախուրյան	Արմավիր	11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք
42	Մեծամոր	Ախուրյան	Արմավիր	0.5 կմ գյ. Ռանչպարից ներքև
43	Քասախ	Հրազդան	Արագածոտն	0,5 կմ ք. Ապարանից վերև
44	Քասախ	Հրազդան	Արագածոտն	0,5 կմ ք. Ապարանից ներքև
45	Քասախ	Հրազդան	Արագածոտն	1 կմ ք. Աշտարակից վերև
46	Քասախ	Հրազդան	Արագածոտն	3.5 կմ ք. Աշտարակից ներքև
47	Քասախ	Հրազդան	Արմավիր	Գետաբերան
48	Գեղարոտ	Հրազդան	Արագածոտն	0.5 կմ գյ. Արագածից վերև
49	Գեղարոտ	Հրազդան	Արագածոտն	Գետաբերան
50	Շաղվարդ	Հրազդան	Արագածոտն	0.5 կմ գյ. Փարպիից ներքև
51	Հրազդան	Հրազդան	Գեղարքունիք	գյ. Գեղամավանի մոտ

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
52	Հրազդան	Հրազդան	Կոտայք	0.5 կմ գյ. Քաղսիից ներքև
53	Հրազդան	Հրազդան	Կոտայք	0.5 կմ գյ. Արգելից ներքև
54	Հրազդան	Հրազդան	Կոտայք	0.5 կմ Արզնի ՀԷԿ-ից ներքև
55	Հրազդան	Հրազդան	Արարատ	9 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ
56	Հրազդան	Հրազդան	Արարատ	Գետաբերան
225	Հրազդան	Հրազդան	Արարատ	գյ. Գեղանիստ
59	Գետառ	Հրազդան	Երևան	Գետաբերան
57	Մարմարիկ	Հրազդան	Կոտայք	0.5 կմ գյ. Հանքավանից վերև
58	Մարմարիկ	Հրազդան	Կոտայք	Գետաբերան
311	Տանձաղբյուր	Հրազդան	Կոտայք	Ծաղկաձոր քաղաքից վերև
312	Տանձաղբյուր	Հրազդան	Կոտայք	Ծաղկաձոր քաղաքից ներքև
60	Զկնագետ	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ գյ. Սեմյոնովկայից վերև
61	Զկնագետ	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
62	Մասրիկ	Սևան	Գեղարքունիք	0,5 կմ գյ. Վերին Շորժայից վերև
63	Մասրիկ	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
64	Սոթք	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ հանքավայրից վերև
65	Սոթք	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
66	Կարճաղբյուր	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ գյ. Աղբյուրաձորից վերև
67	Կարճաղբյուր	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
69	Վարդենիս	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ գյ. Վարդենիկից վերև
70	Վարդենիս	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
71	Մարտունի	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ գյ. Գեղհովիտից վերև
72	Մարտունի	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
73	Արգիճի	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ գյ. Լեռնակերտից վերև
74	Արգիճի	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
75	Ծակքար	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
76	Շողվագ	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
77	Գավառագետ	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ գյ. Ծաղկավանից վերև
78	Գավառագետ	Սևան	Գեղարքունիք	Գետաբերան
80	Վեդի	Արարատյան	Արարատ	0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև
82	Վեդի	Արարատյան	Արարատ	6 կմ ք. Արարատից ներքև
83	Արփա	Արարատյան	Վայոց ձոր	0.5 կմ ք. Ջերմուկից վերև
84	Արփա	Արարատյան	Վայոց ձոր	0.5 կմ ք. Վայքից վերև
85	Արփա	Արարատյան	Վայոց ձոր	0.5 կմ ք. Վայքից ներքև
86	Արփա	Արարատյան	Վայոց ձոր	0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև
87	Արփա	Արարատյան	Վայոց ձոր	0.5 կմ գյ. Արենիից ներքև
88	Եղեգիս	Արարատյան	Վայոց ձոր	0.5 կմ գյ. Շատինից ներքև
68	Արփա-Սևան թունել	Արարատյան	Գեղարքունիք	0.7 կմ գյ. Ծովինարից վերև
89	Մեղրիգետ	Հարավային	Սյունիք	0.5 կմ ք. Մեղրիից վերև
90	Մեղրիգետ	Հարավային	Սյունիք	Գետաբերան
344	Կարճևան	Հարավային	Սյունիք	Գետաբերան
91	Ողջի	Հարավային	Սյունիք	1.7 կմ ք. Քաջարանից վերև
92	Ողջի	Հարավային	Սյունիք	1.8 կմ ք. Քաջարանից ներքև
93	Ողջի	Հարավային	Սյունիք	0.8 կմ ք. Կապանից վերև
94	Ողջի	Հարավային	Սյունիք	0.5 կմ Կապանի օդանավակայանից ներքև
95	Արծվանիկ	Հարավային	Սյունիք	3 կմ գյ. Աճանանից վերև
96	Արծվանիկ	Հարավային	Սյունիք	Գետաբերան
97	Գեղի	Հարավային	Սյունիք	0.5 կմ գյ. Աջաբաջից վերև
98	Գեղի	Հարավային	Սյունիք	Գետաբերան
99	Որոտան	Հարավային	Սյունիք	0.5 կմ գյ. Գորայքից վերև

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
100	Որոտան	Հարավային	Սյունիք	3 կմ ք. Սիսիանից վերև
101	Որոտան	Հարավային	Սյունիք	6 կմ ք. Սիսիանից ներքև
102	Որոտան	Հարավային	Սյունիք	0.5 կմ գյ. Տաթև ՀԷԿ-ից ներքև
103	Սիսիան	Հարավային	Սյունիք	0.5 կմ գյ. Արևիսից վերև
104	Սիսիան	Հարավային	Սյունիք	Գետաբերան
106	Գորիսգետ	Հարավային	Սյունիք	5 կմ ք. Գորիսից վերև
107	Գորիսգետ	Հարավային	Սյունիք	1.5 կմ ք. Գորիսից ներքև
109	Արփի լճի ջրամբար	Ախուրյան	Շիրակ	Ամբարտակի մոտ
110	Ախուրյանի ջրամբար	Ախուրյան	Շիրակ	Ամբարտակի մոտ
111	Ապարանի ջրամբար	Հրազդան	Արագածոտն	Ամբարտակի մոտ
112	Երևանյան լիճ	Հրազդան	Երևան	Ամբարտակի մոտ
113	Ազատի ջրամբար	Արարատյան	Արարատ	Ամբարտակի մոտ
114	Կետչուտի ջրամբար	Արարատյան	Վայոց ձոր	Ամբարտակի մոտ
115	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	3.5 կմ թերակղզուց դեպի արևելք
116	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	70° ազիմուտով թերակղզուց
117	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	Զկնագետ գետի գետաբերանից 1 կմ հեռավորությամբ
118	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	0.5 կմ Շորժա գյուղից դեպի հարավ-արևմուտք
119	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք
120	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	2 կմ Արտանիշ գյուղից 135° ազիմուտով
121	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	10կմ Փամբակ գյուղից 270° ազիմուտով
122	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	2.2կմ Փամբակ գյուղից 255° ազիմուտով
123	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	13կմ Փամբակ գյուղից 235° ազիմուտով
124	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	1կմ Ծովակ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
125	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	1կմ Կարճաղբյուրի գետի գետաբերանից դեպի արևմուտք
126	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	1կմ Արծվանիստ գյուղից դեպի հյուսիս
127	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	1.5կմ Մարտունի քաղաքից դեպի հյուսիս
128	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	15 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով
129	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	24 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով
130	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	7 կմ Նորատուս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք
131	Սևանա լիճ	Սևան	Գեղարքունիք	7.5 կմ Չկալովկա գյուղից դեպի հյուսիս

ՀՀ գետերի ջրի որակը 2018 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գյ. Հարթա-գյուղից վերև (1)	Երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
		0.6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
		4.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրիտ իոն, Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն	5-րդ	
	Դեբեդ	0.5 կմ Մարցիգետ թափման կետից ներքև (5)	Երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Երկաթ	3-րդ	5-րդ
			ԿՆ	4-րդ	
			Մոլիբդեն	5-րդ	
		սահմանի մոտ (7)	Երկաթ,ԿՆ	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն	5-րդ	
	Ջորագետ	0.5 կմ ք. Ստեփանա-վանից վերև (8)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (10)	-	2-րդ	2-րդ
	Տաշիր	0.5 կմ գյ.Միխայելով-կայից վերև (11)	Երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Սարատով-կայից ներքև (12)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ	3-րդ	3-րդ
	Մարցիգետ	Գետաբերան (13)	-	2-րդ	2-րդ
	Ախթալա	Գետաբերան (14)	Երկաթ, կալցիում, կալիում, ՀԼԱ	3-րդ	5-րդ
			Բերիլիում	4-րդ	
			Ցինկ, պղինձ, կադմիում, մոլիբդեն, մանգան, կոբալտ, սուլֆատ իոն, ԿՆ	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Գարգառ	Ակունք (210)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (342)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Շնող	Գետաբերան (343)	Երկաթ, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ
			Պղինձ, մոլիբդեն, ԿՆ	5-րդ	
	Աղստև	1.2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	-	2-րդ	2-րդ
		2 կմ ք. Իջևանրից վերև (17)	Երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		սահմանի մոտ (18)	Նիտրիտ իոն, երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
	Գետիկ	0.5 կմ գյ. Վահանից վերև (19)	Երկաթ, ալյումին, ԿՆ	3-րդ	3-րդ
		Գետաբերան (20)	-	2-րդ	2-րդ
Ախուրյան	Ախուրյան	0.5 կմ գյ. Ամասիայից վերև (31)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ԿՆ	3-րդ	4-րդ
			Երկաթ	4-րդ	
		1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	4-րդ
			Ֆոսֆատ իոն	4-րդ	
		0.8 կմ ք. Գյումրիից վերև (33)	Ֆոսֆատ իոն, մոլիբդեն, երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, երկաթ, ՀԱՍ	3-րդ	4-րդ
			Նիտրիտ իոն, ԿՆ	4-րդ	
		0.5 կմ գյ. Բագարանից ներքև (35)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, մանգան, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	3-րդ
	Աշոցք	0.5 կմ գյ. Մուսայել-յանից վերև (36)	-	2-րդ	2-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	*Ջրային օբյեկտ*	*Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)*	*Ջրի որակի ցուցանիշ*	*Ջրի որակի ցուցանիշի դաս*	*Ջրի որակի ընդհանրական դաս*
Ախուրյան	*Աշոցք*	*Գետաբերան (37)*	*Արսեն, ԿՆ*	*3-րդ*	*3-րդ*
	Կարկաչուն	*Գետաբերան (38)*	*Ամոնիում իոն, մանգան, կալ-ցիում, կա-լիում, նատ-րիում,բոր, ՀԼԱ, ԿՆ*	*3-րդ*	*5-րդ*
			ԹԿՊ5, ԹՔՊ, մոլիբդեն, ընդ-հանուր ֆոս-ֆոր, սուլֆատ իոն	*4-րդ*	
			Լուծված թթվածին, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	*5-րդ*	
	Մեծամոր	*10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)*	*Լուծված թթվածին, ԹՔՊ, ամո-նիում իոն, նիտրատ իոն, մանգան, կալցիում, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	*4-րդ*	
		11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	*Լուծված թթվածին, ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, բոր, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	*4-րդ*	
		0.5 կմ գ. Ռանչպարից ներքև (42)	*Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
			ԹՔՊ	*4-րդ*	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Քասախ	0.5կմ ք. Ապարանից վերև(43)	-	2-րդ	2-րդ
		0.5կմ ք. Ապարանից ներքև(44)	Լուծված թթվածին, ԹԿՊ5, նիտրիտ իոն, երկաթ	3-րդ	5-րդ
			ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	
		1կմ ք.Աշտարակից վերև (45)	Ֆոսֆատ իոն, վանադիում	3-րդ	3-րդ
		3.5 կմ ք.Աշտարակից ներքև (46)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, վանադիում	3-րդ	3-րդ
		Գետաբերան (47)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, վանադիում, ՀԱՄ	3-րդ	4-րդ
			Նիտրատ իոն	4-րդ	
	Գեղարոտ	0.5 կմ գյ. Արագածից վերև (48)	Լուծված թթվածին, ցինկ, նիկել, ալյումին	3-րդ	5-րդ
			Մանգան, կոբալտ	5-րդ	
		Գետաբերան (49)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, ՀԱՄ	3-րդ	4-րդ
			Նիտրիտ իոն	4-րդ	
	Շաղվարդ	0.5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	Ֆոսֆատ իոն, վանադիում	3-րդ	3-րդ
	Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51)	Լուծված թթվածին	3-րդ	4-րդ
			ԹՔՊ	4-րդ	
		0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	Մանգան	3-րդ	4-րդ
			Վանադիում, կալիում*	4-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Հրազդան	0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	ԹՔՊ, մանգան, բարիում	3-րդ	5-րդ
			Կալիում*	4-րդ	
			Վանադիում*	5-րդ	
		0.5 կմ Արզնի ՀԷԿ-ից ներքև (54)	Կալիում*	3-րդ	5-րդ
			Վանադիում*	5-րդ	
		9 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	Երկաթ, նատրիում, քլորիդ իոն, ՀԼԱ	3-րդ	5-րդ
			ԹՔՊ, կոբալտ, կալիում, ԿՆ	4-րդ	
			Լուծված թթվածին, ԹԿՊ5, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
		Գետաբերան (56)	Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրատ իոն, կոբալտ, կալցիում, նատրիում, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, ՀԼԱ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, կալիում, սուլֆատ իոն	4-րդ	
			Վանադիում*	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	*Ջրային օբյեկտ*	*Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)*	*Ջրի որակի ցուցանիշ*	*Ջրի որակի ցուցանիշի դաս*	*Ջրի որակի ընդհանրական դաս*
Հրազդան	*Հրազդան*	*Գյ. Գեղանիստ (225)*	*ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, մանգան, կոբալտ, նատրիում, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, ՀԷԱ*	*3-րդ*	*5-րդ*
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, կալիում	*4-րդ*	
			*Վանադիում**	*5-րդ*	
	Գետառ	*Գետաբերան (59)*	*ԹԿՊ$_5$, ԹՔՊ, նիտրատ իոն, մանգան, կոբալտ, նատրիում, սուլֆատ ռին, ՀԷԱ*	*3-րդ*	*5-րդ*
			Կալիում, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, վանադիում, ՀԱԱ	*5-րդ*	
	Մարմարիկ	*0.5 կմ գյ. Հանքավանից վերև (57)*	*-*	*2-րդ*	*2-րդ*
		Գետաբերան (58)	*Վանադիում, երկաթ, ԿՆ*	*3-րդ*	*5-րդ*
			ԹՔՊ, մանգան, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	*5-րդ*	
Սևան	*Չկնագետ*	*0.5 կմ գյ. Սեմյոնովկայից վերև (60)*	*-*	*2-րդ*	*2-րդ*
		Գետաբերան (61)	*ԹՔՊ*	*3-րդ*	*3-րդ*

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Սևան	Մասրիկ	0.5 կմ գյ. Վերին Շորժայից վերև (62)	Լուծված թթվածին	3-րդ	3-րդ
		Գետաբերան (63)	Ֆոսֆատ իոն	3-րդ	5-րդ
			Վանադիում	5-րդ	
	Սոթք	1.5 կմ հանքավայրից վերև (64)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (65)	Նիտրատ իոն, վանադիում, ալյումին, ՀԱՄ	3-րդ	3-րդ
	Կարճաղբյուր	0.5 կմ գյ. Աղբյուրաձորից վերև (66)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (67)	Մոլիբդեն, վանադիում	3-րդ	3-րդ
	Վարդենիս	0.5 կմ գյ. Վաարդենիկից վերև (69)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (70)	-	2-րդ	2-րդ
	Մարտունի	0.5 կմ գյ. Գեղհովիտից վերև (71)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (72)	-	2-րդ	2-րդ
	Արգիճի	0.5 կմ գյ. Լեռնա-հովիտից վերև (73)	Երկաթ	3-րդ	3-րդ
		Գետաբերան (74)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, վանա-դիում, երկաթ	3-րդ	3-րդ
	Ծակքար	Գետաբերան (75)	Վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ
	Շողվագ	Գետաբերան (76)	Ֆոսֆատ իոն, մոլիբդեն, վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ
	Գավառագետ	0.5 կմ գյ. Ծաղկա-վանից վերև (77)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (78)	ԹՔՊ, նիտրատ իոն, մոլիբդեն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Ֆոսֆատ իոն, վանադիում	4-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Արարատյան	Վեդի	0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև (80)	-	2-րդ	2-րդ
		6 կմ ք. Արարատից ներքև (82)	-	2-րդ	2-րդ
	Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	Երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից վերև (84)	Երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	Մոլիբդեն, ծարիր	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	Մոլիբդեն, երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	Մոլիբդեն, երկաթ, բարիում	3-րդ	3-րդ
	Եղեգիս	0.5 կմ հյ. Շատինից ներքև (88)	Մոլիբդեն, երկաթ	3-րդ	3-րդ
	Արփա-Սևան թունել	0.7 կմ գյ, Ծովինարից վերև (68)	Մոլիբդեն, վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ
Հարավային	Կարճևան	Գետաբերան (344)	Մանգան, երկաթ, ալյումին, սելեն	3-րդ	5-րդ
			Լուծված թթվածին, $БКП_5$, վանադիում, կոբալտ, բերիլիում, կալիում, նատրիում, ծարիր, ՀՄԱ, ՀԼԱ	4-րդ	
			ԹՔՊ, ամոնիում իոն, մոլիբդեն, սուլֆատ իոն, ԿՆ	5-րդ	
	Մեղրիգետ	0.5 կմ ք. Մեղրիից վերև (89)	Երկաթ, ալյումին	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		Գետաբերան (90)	Մանգան, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հարավային	Ողջի	1.7 կմ ք. Քաջարանից վերև (91)	-	2-րդ	2-րդ
		1.78 կմ ք. Քաջարանից ներքև (92)	Ամոնիում իոն, մանգան, կոբալտ, երկաթ, սուլֆատ իոն, ԿՆ	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն, այումին	4-րդ	
		0.8 կմ ք. Կապանից վերև (93)	Մոլիբդեն, կոբալտ, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ Կապանի օդանավակայանից ներքև (94)	Մոլիբդեն, երկաթ, ԿՆ	3-րդ	5-րդ
			Ալյումին	4-րդ	
			Պղինձ, մանգան, կոբալտ	5-րդ	
	Ամանան (Նորաշենիկ)	3 կմ գյ. Ամանանից վերև (346)	Կոբալտ, երկաթ	3-րդ	3-րդ
		Գետաբերան (347)	ԹԿՊ5, ամոնիում իոն, կադմիում, երկաթ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ալյումին, սուլֆատ իոն, ԿՆ	4-րդ	
			Մոլիբդեն, մանգան, վանադիում, կոբալտ, կապիում, ծարիր	5-րդ	
	Գեղի	0.5 կմ գյ. Աջաբաջից վերև (97)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (98)	-	2-րդ	2-րդ
	Որոտան	0.5 կմ գյ. Գորայքից վերև (99)	Երկաթ	3-րդ	3-րդ
		3 կմ ք. Սիսիանից վերև (100)	Ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	*Ջրային օբյեկտ*	*Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)*	*Ջրի որակի ցուցանիշ*	*Ջրի որակի ցուցանիշի դաս*	*Ջրի որակի ընդհանրական դաս*
Հարավային	*Որոտան*	*3 կմ ք. Սիսիանից ներքև (101)*	*Ֆոսֆատ իոն, մոլիբդեն, մանգան, վանադիում*	*3-րդ*	*3-րդ*
		0.5 կմ գյ. Տաթև ՀԷԿ-ից ներքև (102)	*Մոլիբդեն, մանգան, բարիում*	*3-րդ*	*3-րդ*
	Սիսիան	*0.5 կմ գյ. Արևիսից վերև (103)*	-	*2-րդ*	*2-րդ*
		Գետաբերան (104)	*Մոլիբդեն, երկաթ*	*3-րդ*	*3-րդ*
	Վարարակ	*5 կմ ք. Գորիսից վերև (106)*	-	*2-րդ*	*2-րդ*
		1.5 կմ Գորիսից ներքև(107)	*Նիտրատ իոն, մոլիբդեն, կալիում, ՀԱՄ*	*3-րդ*	*5-րդ*
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
			Ֆոսֆատ իոն	*5-րդ*	

2 -րդ դաս՝ «լավ» որակ, 3 -րդ դաս՝ «միջակ» որակ, 4 -րդ դաս՝ «անբավարար» որակ, 5 -րդ դաս՝ «վատ» որակ

**-Հրազդան գետի 52, 53, 54, 56, 225 դիտակետերում ջրի որակի «անբավարար» և «վատ» դասերը պայմանավորված են վանադիումով և կալիումով, որոնց պարունակությունը նշված գետում ֆոնային է:*

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջրի որակը Հարթագյուղից վերև, Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, նիտրատ իոնով և ընդհանուր անօրգանական ազոտով: Վանաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» որակի (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դեբեդ գետի ջրի որակը Մարցիգետ գետի թափման կետից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախյալ նյութերով: Դեբեդ գետի Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավանից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկայից վերև և Սարատովկայից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» որակի (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, նիտրատ և ֆոսֆատ իոններով:

Մարցիգետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մոլիբդենով, մանգանով, կոբալտով և սուլֆատ իոնով:

Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Շնող գետի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված պղնձով, մոլիբդենով և կախյալ նյութերով:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջանից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Իջևանից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, նիտրիտ իոնով և կախյալ նյութերով:

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով և կախյալ նյութերով, գետաբերանի հատվածում՝ «լավ» (2-րդ դաս):






Կոնց. (մգ/դմ³)
Պղինձ
Ախթալա գետ
0,5
0,4
0,3
0,2
0,1
0,0
2017
2018
Նորմ (2-րդ դաս 0,023 մգ/լ))
Ամիսներ
II III IV V VI VII VIII IX X XI XII


Կոնց. (մգ/դմ³)
Ցինկ
Ախթալա գետ
6
5
4
3
2
1
0
2017
2018
Նորմ (2-րդ դաս 0,1 մգ/լ)
Ամիսներ
II III IV V VI VII VIII IX X XI XII


Կոնց. (մգ/դմ³)
Պղինձ
Շնող գետ
0,5
0,4
0,3
0,2
0,1
0,0
2017
2018
Նորմ (2-րդ դաս 0,023 մգ/լ)
Ամիսներ
II III IV V VI VII VIII IX X XI XII


Կոնց. (մգ/դմ³)
Մոլիբդեն
Շնող գետ
0,14
0,12
0,10
0,08
0,06
0,04
0,02
0,00
2017
2018
Նորմ (2-րդ դաս 0,002 մգ/լ)
Ամիսներ
II III IV V VI VII VIII IX X XI XII

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը 2018 թվականին



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիայից վերև և ներքև, Գյումրիից ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ֆոսֆատ և նիտրիտ իոններով և կախյալ նյութերով: Գյումրիից վերև և Բագարանից ներքև հատվածներում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, մանգանով, երկաթով, ընդհանուր ֆոսֆորով և կախյալ նյութերով:

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյանից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով և կախյալ նյութերով: Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Մեծամոր գետի ջրի որակը ողջ հոսանքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, նիտրիտ և ֆոսֆատ իոններով :







ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը 2018 թվականին



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով: Աշտարակից վերև և ներքև հատվածներում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, ֆոսֆատ իոնով և վանադիումով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և կոբալտով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3 -րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և վանադիումով;

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավանի մոտ և Քաղսիից ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, վանադիումով և կալիումով:

Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից ներքև, Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստի մոտ հատվածներում գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով, վանադիումով և ընդհանուր անօրգանական ազոտով:

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավանից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:




Ամոնիում իոն
Միջին տարեկան կոնց. (մգ/դմ³)
Հրազդան գետ
35
30
25
20
15
10
5
0
2017
2018
Նորմ (2-րդ դաս 0,4մգN/լ)
№52 գյ. Քաղսիից 0.5 կմ ներքև
№53 գյ. Արգելից 0.5 կմ ներքև
№54 Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև
№55 գյ. Դարբնիկի մոտ
№56 գետաբերան
№225 գյ. Գեղանիստի մոտ
Դիտակետ


Նիտրիտ իոն
Միջին տարեկան կոնց. (մգN/դմ³)
Հրազդան գետ
0,30
0,25
0,20
0,15
0,10
0,05
0,00
2017
2018
Նորմ (2-րդ դաս 0,06մգN/լ)
№52 գյ. Քաղսիից 0.5 կմ ներքև
№53 գյ. Արգելից 0.5 կմ ներքև
№54 Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև
№55 գյ. Դարբնիկի մոտ
№56 գետաբերան
№225 գյ. Գեղանիստի մոտ
Դիտակետ


Ֆոսֆատ իոն
Միջին տարեկան կոնց. (մգ/դմ³)
Հրազդան գետ
7,0
6,0
5,0
4,0
3,0
2,0
1,0
0,0
2017
2018
Նորմ (2-րդ դաս)
№52 գյ. Քաղսիից 0.5 կմ ներքև
№53 գյ. Արգելից 0.5 կմ ներքև
№54 Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև
№55 գյ. Դարբնիկի մոտ
№56 գետաբերան
№225 գյ. Գեղանիստի մոտ
Դիտակետ


Ամոնիում իոն
Կոնց. (մգN/դմ³)
Գետառ գետ
50
40
30
20
10
0
2017
2018
Նորմ (2-րդ դաս 0,4Nմգ/լ)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
XII
Ամիաներ


Կոնց. (մգN/դմ³)
Նիտրիտիոն
Գետառգետ
1,2
1,0
0,8
0,6
0,4
0,2
0,0
2017
2018
Նորմ
(2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
XII
Ամիսներ


Կոնց. (մգ/դմ³)
Ֆոսֆատիոն
Գետառգետ
6,0
5,0
4,0
3,0
2,0
1,0
0,0
2017
2018
Նորմ
(2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
XII
Ամիսներ

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը 2018 թվականին



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Չկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկայից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով:

Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով:

Սոթք գետի ջրի որակը հանքավայրից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, վանադիումով, ալյումինով, ընդհանուր անօրգանական ազոտով:

Կարճաղբյուր գետի ջրի որակը Աղբյուրաձորից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում ՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և վանադիումով:

Վարդենիս գետի ջրի որակը ողջ հոսանքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը ողջ հոսանքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով:

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով և երկաթով:

Շողվագ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, վանադիումով և երկաթով:

Գավառագետ գետի ջրի որակը գյուղ Ծաղկավանից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և վանադիումով:





ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը 2018 թվականին



www.armmonitoring.am

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Վեդի գետի ջրի որակը ողջ հոսանքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկից վերև, Վայքից վերև և ներքև, Եղեգնաձորից վերև և Արենիից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, երկաթով, ծարիրով և բարիումով:

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև ընկած հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և երկաթով:

Արփա-Սևան թունելի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, վանադիումով և երկաթով:



ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը 2018 թվականին



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Ջրմբ. որակի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս

0 1.5 3 6 9 12 կմ

www.armmonitoring.am

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրիից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, երկաթով և ալյումինով:

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, ամոնիում իոնով, մոլիբդենով, սուլֆատ իոնով և կախյալ նյութերով:

Ողջի գետի ջրի որակը Քաջարան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Քաջարանից ներքև ՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմնավորված մոլիբդենով և ալյումինով, Կապանից վերև՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, կոբալտով, երկաթով և ալյումինով: Կապանի օդանավակայանից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայամանավորված պղնձով, մանգանով և կոբալտով:

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կոբալտով և երկաթով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայամանավորված մոլիբդենով, մանգանով, վանադիումով, կոբալտով, կալիումով և ծարիրով:

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «լավ» (2 -րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը ողջ հոսանքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, երկաթով, մոլիբդենով, մանգանով, վանադիումով և բարիումով:

Սիսիան գետի ջրի որակը գյուղ Արևիսից վերև ընկած հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և երկաթով:

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև ընկած հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), իսկ Գորիսից ներքև ընկած հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայամանավորված ֆոսֆատ իոնով:




Կոնց. (մգ/դմ³)
Պղինձ
Կարճևան գետ
0,12
0,10
0,08
0,06
0,04
0,02
0,00
2017
2018
Նորմ (2-րդ դաս)
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
XI
Ամիսներ


Միջին տարեկան կոնց. (մգN/դմ³)
Ամոնիում իոն
Ողջի գետ
6,0
5,0
4,0
3,0
2,0
1,0
0,0
2017
2018
Նորմ (2-րդ դաս)
№91 Ողջի գետի ք. Քաջարանից վերև
№92 Ողջի գետի ք. Քաջարանից ներքև
№93 Ողջի գետի ք. Կապանից վերև
№94 Ողջի գետի ք. Կապանի օդանավակայանից ներքև
Դիտակետ


Միջին տարեկան կոնց. (մգN/դմ³)
Մոլիբդեն
Ողջի գետ
0,35
0,30
0,25
0,20
0,15
0,10
0,05
0,00
2017
2018
Նորմ (2-րդ դաս)
№91 Ողջի գետի ք. Քաջարանից վերև
№92 Ողջի գետի ք. Քաջարանից ներքև
№93 Ողջի գետի ք. Կապանից վերև
№94 Ողջի գետի ք. Կապանի օդանավակայանից ներքև
Դիտակետ


Միջին տարեկան կոնց. (մգ/դմ³)
Պղինձ
Ողջի գետ
0,12
0,10
0,08
0,06
0,04
0,02
0,00
2017
2018
Նորմ (2-րդ դաս)
№91 Ողջի գետի ք. Քաջարանից վերև
№92 Ողջի գետի ք. Քաջարանից ներքև
№93 Ողջի գետի ք. Կապանից վերև
№94 Ողջի գետի ք. Կապանի օդանավակայանից ներքև
Դիտակետ

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը 2018 թվականին



ՀՀ ջրամբարների ջրի որակը 2018 թվականին

Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի ջրամբարների ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ և ամոնիում իոններով, կախյալ նյութերով, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական և թթվածնի քիմիական պահանջներով: Երևանյան լճի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով: Ազատի և Կեչուտի ջրամբարների ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Ջրային օբյեկտ	*Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)*	*Ջրի որակի ցուցանիշ*	*Ջրի որակի ցուցանիշի դասը*	*Ջրի որակի ընդհանրական դասը*
Արփի լճի ջրամբար	*ամբարտակի մոտ (109)*	*Ֆոսֆատ իոն, ԿՆ*	*3-րդ*	*3-րդ*
Ախուրյանի ջրամբար	*ամբարտակի մոտ (110)*	*$БКП_5$, ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն*	*3-րդ*	*3-րդ*
Ապարանի ջրամբար	*ամբարտակի մոտ (111)*	*ԹՔՊ*	*3-րդ*	*3-րդ*
Երևանյան լիճ	*ամբարտակի մոտ (112)*	*ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ*	*3-րդ*	*4-րդ*
		Ամոնիում իոն, նիտրիտ իոն	*4-րդ*	
Ազատի ջրամբար	*ամբարտակի մոտ (113)*	-	*2-րդ*	*2-րդ*
Կեչուտի ջրամբար	*ամբարտակի մոտ (114)*	-	*2-րդ*	*2-րդ*

ՀՀ ջրամբարների ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2):





Արաքս գետ

2018 թվականի ընթացքում տեղի է ունեցել հայ-իրանական երեք համատեղ նմուշառում, որի արդյունքում վերցվել են ինչպես Արաքս գետի ջրի, այնպես էլ գետի հատակային նրստվածքների փորձա-նմուշներ:

Արաքս գետի 7 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, ցինկի, պղնձի, քրոմի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները:

Համատեղ նմուշառման ընթացքում 6 դիտակետից վերցված հատակային նստվածքներում որոշված ցուցանիշների մի մասը բերված է ստորև՝ աղյուսակի տեսքով.

Արաքս գետի որակի մոնիթորինգի արդյունքները 2018 թվականին

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*										
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	*Նիտրիտ իոն, ՍԹԿ=0.024 մգN/լ*	*Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0.001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0.001 մգ/լ*	*Նիկել, ՍԹԿ=0.01 մգ/լ*	*Մանգան, ՍԹԿ=0.01 մգ/լ*	*Ամոնիում, ՍԹԿ=0.001 մգ/լ*	*Երկաթ, ՍԹԿ=0.5 մգ/լ*	*Կոբալտ, ՍԹԿ=0.04 մգ/լ*	*Սելեն, ՍԹԿ=0.001 մգ/լ*
Սուրմալու գյուղի դիմաց (25)	_	*1.7*	_	*8.5*	*9.8*	*3.1*	*21.0*	*12.5*	*4.2*	*35.4*	*0.8*
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	_	*3.9*	*1.2*	*5.3*	*11.2*	*1.5*	*7.3*	*16.0*	*3.4*	*30.5*	*1.8*
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	_	*5.2*	*1.4*	*5.1*	*10.4*	*1.3*	*7.2*	*16.9*	*3.0*	*24.8*	*2.4*
Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև (28)	_	*5.3*	*1.4*	*11.7*	*16.0*	*2.6*	*16.7*	*20.6*	*6.0*	*49.4*	*2.2*
Ագարակի քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	_	_	*2.0*	*7.4*	*7.9*	*1.3*	*13.4*	*15.5*	*3.1*	*30.0*	*2.5*
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	_	*1.3*	*2.0*	*34.8*	*9.0*	*1.6*	*21.6*	*18.1*	*5.0*	*40.6*	*2.8*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	*1.3*	_	*1.7*	*29.2*	*8.8*	*1.7*	*25.2*	*17.8*	*6.1*	*51.0*	*2.5*
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	_	_	*1.9*	*91.4*	*9.9*	*1.6*	*39.6*	*24.1*	*13.1*	*71.2*	*3.5*
IMS-1 (AMS-1-ի դիմաց իրանական ափ)	_	*1.6*	*2.0*	*4.7*	*8.1*	*1.2*	*9.3*	*15.1*	*2.6*	*17.6*	*2.3*
IMS-3 (AMS-2-ի դիմաց իրանական ափ)	_	*1.7*	*2.0*	*4.4*	*9.4*	*1.2*	*8.2*	*16.3*	*2.4*	*16.0*	*2.4*
IMS-5 (AMS-3-ի դիմաց իրանական ափ)	_	*1.7*	*2.0*	*6.8*	*9.4*	*1.3*	*9.8*	*15.5*	*3.0*	*18.9*	*2.2*

Սևանա լիճ

2018 թ. մայիսին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է 17 դիտակետում, ջրի նմուշները վերցվել են ափամերձ և ափից կենտրոն գոտիներից: Ափամերձ գոտուց ջրի նմուշները վերցվել են և' մակերևութային (մինչև 0.5 մ խորության) և' հատակամերձ շերտերից: Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, ՍԹԿ-ն գերազանցել են ԹԿՊ$_5$-ի, ԹՔՊ-ի, ցինկի, պղնձի, քրոմի, վանադիումի, մագնեզիումի և սելենի կոնցենտրացիաները: ԹԿՊ$_5$-ի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան գերազանցվել է 1.2 անգամ, ԹՔՊ-ինը՝ 1.2-1.5 անգամ, ցինկինը՝ 1.2-1.4, պղնձինը՝ 1.2-2.9 անգամ, քրոմինը՝ 1.7-3.3 անգամ, վանադիումինը՝ 3.7-6.6 անգամ, մագնեզիումինը՝ 1.2-1.3 անգամ, սելենինը՝ 1.4-2.7 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների սահմաններում:

Սևանա լճում կապտականաչ ջրիմուռների աճի հնարավոր պատճառ հանդիսանում են լճի ջրի վաղ տաքացումը և լճում բավարար քանակությամբ կենսածին տարրերի՝ հատկապես ֆոսֆորի առկայությունը: Վերջին տարիներին դիտվում է Սևանա լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի աճ:

Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում նաև կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:

Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակություն-ները ներկայացված են ստորև գրաֆիկական տեսքով.






Ֆոսֆատիոն
Սևանա լիճ (մակերևույթ)
Կոնց., մգ/դմ³
0,20
0,16
0,12
0,08
0,04
0,00
115 116 117 118 119 120 121 122 123 124 125 127 128 129 130 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ=3,5 մգ/լ


Ֆոսֆատիոն
Սևանա լիճ (7-10մ խորություն)
Կոնց., մգ/դմ³
0,20
0,16
0,12
0,08
0,04
0,00
115 116 117 118 119 120 121 122 123 124 125 127 128 129 130 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ=3,5 մգ/լ


Ֆոսֆատիոն
Սևանա լիճ (25-40մ խորություն)
Կոնց., մգ/դմ³
0,24
0,20
0,16
0,12
0,08
0,04
0,00
115 116 119 120 121 123 129 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ=3,5 մգ/լ


Թթվածնի քիմիական պահանջարկ
Սևանա լիճ (մակերևույթ)
Կոնց. (մգO2/լ)
70
60
50
40
30
20
10
0
115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ


Թթվածնի քիմիական պահանջարկ
Սևանա լիճ (7 - 10մ խորություն)
Կոնց. (մգO2/լ)
70
60
50
40
30
20
10
0
115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ


Թթվածնի քիմիական պահանջարկ
Սևանա լիճ (20-40մ խորություն)
Կոնց. (մգO2/լ)
60
50
40
30
20
10
0
115 116 119 120 121 123 129 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ


Ամոնիում իոն
Սևանա լիճ (մակերևույթ)
Կոնց. (մգN/լ)
0,45
0,40
0,35
0,30
0,25
0,20
0,15
0,10
0,05
0,00
115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ


Ամոնիում իոն
Սևանա լիճ (7 - 10մ խորություն)
Կոնց. (մգN/լ)
0,45
0,40
0,35
0,30
0,25
0,20
0,15
0,10
0,05
0,00
115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ


Ամոնիում իոն
Սևանա լիճ (20-40մ խորություն)
Կոնց. (մգN/լ)
0,45
0,40
0,35
0,30
0,25
0,20
0,15
0,10
0,05
0,00
115 116 119 120 121 123 129 131
Դիտակետ
2017
2018
ՍԹԿ

Սևանա լճի որակի մոնիթորինգի արդյունքները 2018 թվականին

Դիտակետի համար	*Դիտակետի տեղադրություն*	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*							
		Թթվածնի 5-օրյա կենսաբիոքիմիական պահանջ, ՍԹԿ=3 մգ/լ	*Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ*	*Յինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Նավթամթերք, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Սպիտեիտ, ՍԹԿ=40 մգ/լ*	*Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ*
115	*3.5 կմ թերակղզուց դեպի արևելք, մակերևույթից*	_	_	_	_	*3,3*	*4,6*	_	*2,3*
	3.5 կմ թերակղզուց դեպի արևելք, 7մ խորությունից	_	_	_	_	*2,9*	*4,0*	_	*1,8*
	3.5 կմ թերակղզուց դեպի արևելք, 40մ խորությունից	_	_	_	_	*1,7*	*3,8*	_	*1,4*
116	*70° ազիմուտով թերակղզուց, մակերևույթից*	_	_	*1,3*	*1,2*	*2,5*	*4,5*	_	*1,6*
	70° ազիմուտով թերակղզուց, 7մ խորությունից	_	_	_	_	*2,4*	*4,2*	_	*2,2*
	70° ազիմուտով թերակղզուց, 30մ խորությունից	_	_	_	_	*2,8*	*4,3*	_	*2,1*
117	*Զկնագետ գետի գետաբերանից 1 կմ հեռավորությամբ, մակերևույթից*	_	_	_	_	*2,2*	*4,0*	_	*1,4*
	Զկնագետ գետի գետաբերանից 1 կմ հեռավորությամբ, 7մ խորությունից	_	_	_	_	*2,8*	*4,0*	_	*1,5*
118	*0.5 կմ Շորժա գյուղից դեպի հարավ-արևմուտք, մակերևույթից*	_	_	_	_	*2,4*	*4,6*	_	*2,2*
	0.5 կմ Շորժա գյուղից դեպի հարավ-արևմուտք, 7մ խորությունից	_	_	_	_	*2,5*	*4,7*	_	*2,1*
119	*6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք, մակերևույթից*	_	_	_	_	*2,7*	*4,4*	_	*2,1*
	6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք, 7մ խորությունից	_	_	_	_	*2,4*	*4,7*	_	*2,1*
	6.6 կմ 225° ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք, 40մ խորությունից	_	_	_	_	*2,5*	*4,3*	_	*2,1*

Դիտակետի համար	Դիտակետի տեղադրություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)							
		Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական ախտանիշի, կամաշտարկի, ՍԹԿ=3 մգ/լ	Թթվածնի լուծված կծռտի, շտատրա ՍԹԿ=30 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Նավթ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Ամոնիումական ազոտ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Ընդհանուր ֆոսֆոր, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
120	2 կմ Արտանիշ գյուղից 135° ազիմուտով, մակերևույթից	_	_	1,2	_	2,7	6,1	1,2	2,1
	2 կմ Արտանիշ գյուղից 135° ազիմուտով, 7մ խորությունից	_	_	_	_	2,8	6,5	1,3	2,2
	2 կմ Արտանիշ գյուղից 135° ազիմուտով, 30մ խորությունից	_	_	_	_	2,9	6,6	1,3	2,2
121	10կմ Փամբակ գյուղից 270° ազիմուտով, մակերևույթից	_	_	_	_	2,7	6,3	1,3	2,5
	10կմ Փամբակ գյուղից 270° ազիմուտով, 7մ խորությունից	_	1,5	_	_	2,5	5,9	1,2	2,0
	10կմ Փամբակ գյուղից 270° ազիմուտով, 25մ խորությունից	_	_	_	_	2,3	5,9	1,2	2,0
122	2.2կմ Փամբակ գյուղից 255° ազիմուտով, մակերևույթից	_	_	_	2,9	2,5	5,7	1,3	2,3
	2.2կմ Փամբակ գյուղից 255° ազիմուտով, 7մ խորությունից	_	_	_	_	2,7	6,0	_	2,4
123	13կմ Փամբակ գյուղից 235° ազիմուտով, մակերևույթից	1,2	_	1,4	_	2,9	6,1	1,2	2,4
	13կմ Փամբակ գյուղից 235° ազիմուտով, 7մ խորությունից	_	_	_	_	2,9	5,8	_	2,3
	13կմ Փամբակ գյուղից 235° ազիմուտով, 30մ խորությունից	_	_	_	_	3,0	6,1	1,2	2,5
124	1կմ Ծովակ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, մակերևույթից	1,2	1,2	_	_	3,3	6,2	1,2	2,5
	1կմ Ծովակ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, 7մ խորությունից	_	_	_	_	2,6	6,3	1,2	2,7
	1կմ Ծովակ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, 25մ խորությունից	_	_	_	_	3,2	6,5	1,3	2,6
125	1կմ Կարճաղբյուրի գետի գետաբերանից դեպի արևմուտք, մակերևույթից	1,2	_	_	_	2,9	6,6	_	2,2
	1կմ Կարճաղբյուրի գետի գետաբերանից դեպի արևմուտք, 7մ խորությունից	_	_	_	_	3,0	6,2	1,2	2,5
	1կմ Արծվանիստ գյուղից դեպի հյուսիս, մակերևույթից	_	_	_	1,2	2,4	5,9	1,2	2,1
	1կմ Արծվանիստ գյուղից դեպի հյուսիս, 7մ խորությունից	_	_	_	_	2,7	6,4	1,2	2,2

Դիտակետի համար	Դիտակետի տեղադրություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)							
		Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական ախտանիշով, կեղտոտման ՍԹԿ=3 մգ/լ	Թթվածնի լուծված կենսաքիմիական ախտանիշով, շղտոման ՍԹԿ=30 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քլոր, ՍԹԿ=0,001 մգ/լ	Նավթամթերք, ՍԹԿ=0,001 մգ/լ	Սպանիլհամ, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
127	*1.5կմ Մարտունի քաղաքից դեպի հյուսիս, մակերևույթից*	_	_	_	_	*2,7*	*5,7*	_	*2,0*
	1.5կմ Մարտունի քաղաքից դեպի հյուսիս, 7մ խորությունից	_	_	_	_	*3,1*	*5,8*	*1,2*	*2,1*
128	*15 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, մակերևույթից*	_	_	_	*1,4*	*3,0*	*5,9*	*1,2*	*2,3*
	15 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, 7մ խորությունից	_	_	_	_	*3,0*	*6,1*	*1,2*	*2,4*
129	*24 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, մակերևույթից*	_	_	_	_	*2,6*	*5,4*	_	*1,9*
	24 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, 7մ խորությունից	_	*1,3*	_	_	*3,0*	*6,2*	*1,2*	*2,2*
	24 կմ Երանոս գյուղից 90° ազիմուտով, 30մ խորությունից	_	_	_	_	*3,1*	*6,3*	*1,2*	*2,4*
130	*7 կմ Նորատուս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, մակերևույթից*	_	_	_	_	*3,3*	*5,0*	_	*2,4*
	7 կմ Նորատուս գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, 7մ խորությունից	_	_	_	_	*3,1*	*5,0*	_	*2,5*
131	*7.5 կմ Չկալովկա գյուղից դեպի հյուսիս, մակերևույթից*	_	_	_	_	*2,2*	*3,9*	_	*1,5*
	7.5 կմ Չկալովկա գյուղից դեպի հյուսիս, 7մ խորությունից	_	_	_	_	*2,3*	*4,1*	_	*1,7*
	7.5 կմ Չկալովկա գյուղից դեպի հյուսիս, 30մ խորությունից	_	_	_	_	*2,5*	*3,7*	_	*1,4*

Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիթորինգ

2018 թվականին ընթացքում Տանձաղբյուր գետի Ծաղկաձորից վերև հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, վանադիումով, երկաթով և ալյումինով, իսկ Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և մանգանով:

Ջրավազանային կառավարման տարածք	***Ջրային օբյեկտ***	***Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)***	***Ջրի որակի ցուցանիշ***	***Ջրի որակի ցուցանիշի դաս***	***Ջրի որակի ընդհանրական դաս***
Հրազդան	*Տանձաղբյուր*	*Ծաղկաձորից վերև (311)*	*Մանգան, վանադիում, երկաթ, ալյումին*	*3-րդ*	*3-րդ*
		Ծաղկաձորից ներքև (312)	*ԹՔՊ, նիտրիտ իոն, կոբալտ, երկաթ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*5-րդ*
			Ամոնիում իոն, վանադիում, բարիում	*4-րդ*	
			Ֆոսֆատ իոն, մանգան	*5-րդ*	

Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ

1. *Ջերմաստիճան*
2. *Գույն*
3. *Հոտ*
4. *Թափանցելիություն*
5. *Կախյալ նյութեր (ԿՆ)*
6. *էլեկտրահաղորդականություն*
7. *Լուծված թթվածին*
8. *Թթվածնի հագեցվածություն*
9. *Թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջ ($ԹԿՊ_5$)*
10. *Թթվածնի քիմիական պահանջ (ԹՔՊ)*
11. *Ջրածնային ցուցիչ*
12. *Ընդհանուր լուծված աղեր (ԸԼԱ)*
13. *Կոշտություն*
14. *Հիդրոկարբոնատ իոն*
15. *Սուլֆատներ*
16. *Քլորիդներ*
17. *Ֆտորիդներ*
18. *Ֆոսֆատներ*
19. *Ընդհանուր ֆոսֆոր*
20. *Նիտրիտ իոն*
21. *Նիտրատ իոն*
22. *Ամոնիում իոն*
23. *Սիլիցիում*
24. *Կալիում*
25. *Նատրիում*
26. *Լիթիում*
27. *Կալցիում*
28. *Մագնեզիում*
29. *Մելեն*
30. *Ալյումին*
31. *Քրոմ*
32. *Երկաթ*
33. *Մանգան*
34. *Պղինձ*
35. *Ցինկ*
36. *Արսեն*
37. *Ստրոնցիում*
38. *Կադմիում*
39. *Կապար*
40. *Կոբալտ*
41. *Նիկել*
42. *Վանադիում*
43. *Մոլիբդեն*
44. *Բարիում*
45. *Բերիլիում*
46. *Բոր*
47. *Անագ*
48. *Նավթամթերքներ*

Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմեր
(ըստ ՀՀ կառավարության 2011թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման)

Որակի ցուցանիշներ	Որակի դաս					Միավոր
	I	II	III	IV	V	
	գերազանց	լավ	միջակ	անբավարար	վատ	
Լուծված թթվածին	>7 կամ ՖԿ*	>6	>5	>4	<4	մգ O_2/լ
$БПК_5$	3	5	9	18	>18	մգ O_2/l
$ХПК_{Cr}$	10	25	40	80	>80	մգ O/l
Ամոնիում իոն	0,2 կամ ՖԿ	0,4	1,2	2,4	> 2,4	մգ N/լ
Նիտրիտ իոն	0,01 կամ ՖԿ	0,06	0,12	0,3	>0,3	մգ N/լ
Նիտրատ իոն	1 կամ ՖԿ	2,5	5,6	11,3	>11,3	մգ N/լ
Ֆոսֆատ իոն	0,05 կամ ՖԿ	0,1	0,2	0,4	>0,4	մգP/լ
Ցինկ, ընդհանուր	ՖԿ	100	200	500	>500	մկգ/լ
Պղինձ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+20	50	100	>100	մկգ/լ
Քրոմ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (50)	100	250	>250	մկգ/լ
Արսեն, ընդհանուր	ՖԿ	20	50	100	>100	մկգ/լ
Կադմիում, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+1	ՖԿ+2	ՖԿ+4	>ՖԿ+4	մկգ/լ
Կապար, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10	25	50	>50	մկգ/լ
Նիկել, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (20)	50	100	>100	մկգ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 25	8xՖԿ կամ 50	>8xՖԿ	մկգ/լ
Մանգան, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 200	8xՖԿ կամ 500	>8xՖԿ	մկգ/լ
Վանադիում,ընդհանուր	ՖԿ	2xՖԿ+5 կամ 10	4xՖԿ	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Կոբալտ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 20	4xՖԿ կամ 50	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 0,5	0,5	1	>1	մգ/լ
Կալցիում	ՖԿ	100	200	300	>300	մգ/լ
Մագնեզիում	ՖԿ	50	100	200	>200	մգ/լ
Բարիում	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 250	1000	>1000	մկգ/լ
Բերիլիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	100	>100	մկգ/լ
Կալիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Նատրիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Լիթիում	ՖԿ	ՖԿ	-	2500	>2500	մկգ/լ
Բոր	ՖԿ	450	700	1000	>2000	մկգ/լ
Ալյումին	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	5000	>5000	մկգ/լ
Սելեն, ընդհանուր	ՖԿ կամ 10	20	40	80	>80	մկգ/լ
Ծարիր, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
Անագ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
$ХПК_{Mn}$	5 կամ ՖԿ	10	15	20	>20	մգO_2/լ
Ընդհանուր անօրգանական ազոտ	1,5 կամ ՖԿ	4	8	16	>16	մգ N/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0,1 կամ ՖԿ	0,2	0,4	1	>1	մգ լ
Քլորիդ իոն	ՖԿ	2xՖԿ	150	200	> 200	մգ/լ
Սուլֆատ իոն	ՖԿ	2xՖԿ	150	250	> 250	մգ/լ
Սիլիկատ իոն	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 20	8xՖԿ	>8xՖԿ	մգSi/լ
Ընդհանուր հանքայնացում	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մգ/լ
Էլեկտրահաղորդականություն	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մկՍիմ/սմ
Կոշտություն	2,8	10	20	40	<40	մգէկվ/լ
Կախված մասնիկներ	ՖԿ	1,2xՖԿ	2xՖԿ (30)	4xՖԿ	>4xՖԿ	մգ/լ
Հոտ (20°C և 60°C)	<2 (բնական)	2 (բնական)	2	4	>4	բալ
Գույն	(բնական)	>5 (բնական)	20	30	>200	աստ,

* Ֆ Կ - ֆ ո ն ա յ ի ն կ ո ն ց ե ն տ ր ա ց ի ա *

Ծանոթագրություն. ՀՀ 14 խոշոր գետային ավազանների գետերի, գետերի առանձին հատվածների և վտակների որակի ցուցանիշների ֆոնային կոնցենտրացիաները և էկոլոգիական նորմերի ամբողջական ցանկը տրված է http://www.armmonitoring.am/ ինտերնետային կայքում:

Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ (ըստ 1990թ.-ին ընդունված ձկնատնտեսական նորմերի)

Ցուցանիշներ	*Վնասակարության լիմիտացված ցուցանիշ*	*Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/դմ³*
Լուծված թթվածին	*Ընդհանուր պահանջները*	*6-ից ոչ պակաս*
$БПК_5$	*-//-*	*3,0*
ԹՔՊ	*-//-*	*30,0*
Ամոնիում իոն (NH_4^+)	*Թունագիտական*	*0,5 (N/դմ³ - 0,39)*
Նիտրատ իոն (NO_3^-)	*Սանիտարա-թունագիտական*	*40,0 (N/դմ³ - 9,0)*
Նիտրիտ իոն(NO_2^-)	*Թունագիտական*	*0,08 (N/դմ³ - 0,02)*
Ֆոսֆատ իոն(PO_4^{2-})	*Ընդհանուր պահանջները*	*3,5*
Ընդհանուր երկաթ	*Զգայարանական*	*0,5*
Մկնդեղ	*-//-*	*0,001*
Պղինձ	*Թունագիտական*	*0,001*
Ցինկ	*-//-*	*0,01*
Ալյումին	*-//-*	*0,04*
Վանադիում	*-//-*	*0,001*
Քրոմ	*-//-*	*0,001*
Մանգան	*-//-*	*0,01*
Կալիում	*-//-*	*50,0*
Կալցիում	*-//-*	*180,0*
Մագնեզիում	*-//-*	*40,0*
Նատրիում	*-//-*	*120,0*
Կոբալտ	*-//-*	*0,01*
Նիկել	*-//-*	*0,01*
Արսեն	*-//-*	*0,05*
Կադմիում	*-//-*	*0,005*
Կապար	*-//-*	*0,1*
Բրոմ	*Սանիտարա-թունագիտական*	*0,2*
Մոլիբդեն	*-//-*	*0,5*
Ստրոնցիում	*-//-*	*2,0*
Սուլֆատ իոն (SO_4^{2-})	*-//-*	*100,0*
Քլոր իոն (Cl^-)	*-//-*	*300,0*
Իոնների գումարը	*Ընդհանուր պահանջներում*	*1000,0*
Կախված մասնիկներ	*Ընդհանուր պահանջներում*	*Կախված մասնիկների պարունակությունը բնական ֆոնից չպետք է գերազանցի 0,75 մգ/դմ³*

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 46

Կայք էջ՝ armmonitoring.am

Տեղեկատվական վերլուծության բաժին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3

Էլ. փոստ՝ monitoring-info@mail.ru
Հեռախոս՝ (011) 810-084